8. Եթէ 50 դանեկանի առնեմ եւ 62 $\frac{1}{2}$ դանեկանի ծախեմ, հարիւրին քանի՞ կը շահիմ :

9. Եթէ 2 $\frac{1}{2}$ լիրայի առնեմ եւ 2 լիրայի ծախեմ, հարիւրին քանի՞ մնաս կ'ընեմ :

10. Եթէ 11 լիրայի առնեմ եւ 10 լիրայի ծախեմ, հարիւրին քանի՞ մնաս կ'ընեմ :

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԳ ԳԱՍ

Ա. 1. Ի՞նչ է այն ապրանքին դրամագլուխը, զոր հարիւրին 15 շահով եթէ ծախեմ, 12 դանեկան կը շահիմ :

Լուծում : Հարիւրին 15, այսինքն $\frac{15}{100} = \frac{3}{20}$. եւ եթէ դրամագլուխոյն $\frac{3}{20}$ ը 12 դանեկան է, նոյն դրամագլուխոյն $\frac{2}{20}$ ն է 4 դանեկան, եւ $\frac{2}{20}$ ը 80 դանեկան :

2. Ի՞նչ է այն ապրանքին դրամագլուխը, զոր եւ եթէ հարիւրին 12 $\frac{1}{2}$ շահով ծախեմ, 15 դանեկան կը շահիմ :

3. Ի՞նչ է այն ապրանքին դրամագլուխը, զոր եւ եթէ հարիւրին 20 շահով ծախեմ, 2 $\frac{1}{2}$ լիրա կը շահիմ :

4. Ի՞նչ է այն ապրանքին դրամագլուխը, զոր եւ եթէ հարիւրին 16 շահով ծախեմ, 120 դանեկան կը շահիմ :

5. Ի՞նչ է այն ապրանքին դրամագլուխը, զոր եւ եթէ հարիւրին 16 մնասով ծախեմ, 12 մէճլիտիյէ մնաս կ'ընեմ :

6. Ի՞նչ է այն ապրանքին դրամագլուխը զոր եթէ հարիւրին 75 մնասով ծախեմ, 48 մէճխոյէ կը կորսնցնեմ:

7. Ի՞նչ է այն ապրանքին դրամագլուխը, զոր եթէ հարիւրին 33 $\frac{1}{3}$ մնասով ծախեմ, 33 լիւրա մնաս կ'ընեմ:

Բ. 1. Ի՞նչ է այն ապրանքին դրամագլուխը, զոր եթէ 145 դանեկանի ծախեմ, հարիւրին 16 դանեկան կը շահիմ:

Լո՞ծո՞՞մ: Հարիւրին 16, այսինքն $\frac{4}{5}$ շահ տուող գինը՝ դրամագլխին $\frac{2}{5} + \frac{4}{5}$, այսինքն $\frac{2}{5}$ ն է. արդ՝ եթէ դրամագլխոյն $\frac{2}{5}$ ը 145 դանեկան է, $\frac{1}{5}$ ն է 5 դանեկան, եւ $\frac{2}{5}$ ը, այսինքն՝ ապրանքին դրամագլուխը, 125:

2. Ի՞նչ էր դրամագլուխ կարատոյն, զոր 360 դանեկանի ծախելով՝ հարիւրին 10 մնաս ըրի:

Լո՞ծո՞՞մ: Եթէ մնասը զոր ըրի՝ դրամագլխոյն $\frac{1}{10}$ ն է, ապա գինը որով ծախեցի կարասին՝ էր դրամագլխոյն $\frac{9}{10}$ ը: Արդ՝ եթէ դրամագլխոյն $\frac{9}{10}$ ը 360 դանեկան է, $\frac{1}{10}$ ն է 400 դանեկան:

3. Ի՞նչ էր դրամագլուխ ապրանքին, զոր 28 մէճխոյէի ծախելով շահեցայ հարիւրին 33 $\frac{1}{3}$:

4. Ի՞նչ էր գին ապրանքին, զոր 12 $\frac{1}{2}$ լիւրայի ծախելով շահեցայ հարիւրին 25:

5. Ի՞նչ էր դրամագլուխ ապրանքին, զոր 56 մէճխոյէի ծախելով մնաս ըրի հարիւրին 20:

6. Ի՞նչ էր դրամագլուխ ապրանքին, զոր 84 լիւրայի ծախելով մնաս ըրի հարիւրին 12 $\frac{1}{2}$:

7. Ի՞նչ էր դրամագլուխ ապրանքին, զոր 62 դանեկանի ծախելով շահեցայ հարիւրին 8:

8. Ի՞նչ էր դրամագլուխ ապրանքին, զոր 153 դանեկանի ծախելով հարիւրին 5 մնաս ըրի:

9. Ի՞նչ էր դրամագլուխ ապրանքին, զոր 87 մէճխոյէի ծախելով հարիւրին 16 շահեցայ:

Գ. 1. Եթէ շահը դրամագլխոյն հարիւրին 24 ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

Լո՞ծո՞՞մ: Եթէ շահը դրամագլխոյն $\frac{24}{100}$ ն է, ապա գինը որով ապրանքը ծախուած է՝ $\frac{100}{100} + \frac{24}{100}$ է, եւ շահն է $\frac{24}{100} = \frac{6}{25}$, այսինքն հարիւրին 19 $\frac{1}{4}$:

2. Եթէ շահը դրամագլխոյն հարիւրին 20 ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

3. Եթէ շահը դրամագլխոյն հարիւրին 35 ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

4. Եթէ շահը դրամագլխոյն հարիւրին 10 ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

5. Եթէ մնասը դրամագլխոյն հարիւրին 10 ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

6. Եթէ մնասը դրամագլխոյն հարիւրին 50 ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

7. Եթէ մնասը դրամագլխոյն հարիւրին 30 ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

8. Եթէ մնասը դրամագլխոյն հարիւրին 14 $\frac{2}{7}$ ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

9. Եթէ մնասը դրամագլխոյն հարիւրին 11 $\frac{1}{9}$ ն է, հարիւրին քանի՞ն է գնոյն որով ծախուած է ապրանքը:

10. Ձի ծախելով 120 մէճխօխյէի, դրամագլխէն հարիւրին 23 վնաս ըրի. արդ, ստակը զոր առի՝ դրամագլխոյն հարիւրին քանի՞ն է: Ձիուն դրամագլուխը քանի՞ մէճխօխյէ էր, եւ վնասը՝ քանի՞:

11. Ձի մը ծախելով 140 մէճխօխյէի, դրամագլխոյն հարիւրին 16 $\frac{2}{3}$ ը շահեցայ. արդ՝ ձիուն դրամագլուխն ի՞նչ էր: Իմ շահս ի՞նչ էր:

12. Աերպաս ծախեցի կանգունը 24 դահեկանի, եւ հաշուելով գտայ որ, եթէ կանգունը 27 դահեկանի ծախէի, շահս հարիւրին 13 աւելի պիտի ըլլար. արդ՝ կերպասին կանգնոյն բուն գինը կամ դրամագլուխը քանի՞ էր:

13. Եթէ այս ինչ կերպասոյ կանգունը 12 $\frac{1}{2}$ դահեկանի ծախեամ, կը շահիմ հարիւրին 23. արդ՝ կանգունը քանի՞ ծախելու եմ որ հարիւրին 30 շահիմ:

14. Վաճառական մը 260 լիրայի վաճառք ծախելով հարիւրին 30 շահեցաւ. արդ՝ վաճառքին դրամագլուխն ի՞նչ էր:

15. Վերարկու մը ծախելով 7 մէճխօխյէի, վնաս ըրի հարիւրին 30. արդ՝ քանի՞ն գնած էի վերարկուն:

16. Մարդ մը երկու ձի ծախելով իւրաքանչիւրը երկու հարիւր մէճխօխյէի, մէկէն շահեցաւ հարիւրին 20, եւ միւսէն վնաս ըրաւ հարիւրին 20. արդ՝ այս առեւտրոյ մէջ մարդը շահ ըրաւ թէ վնաս: Շահը կամ վնասը ո՞րչափ էր:

17. Մարդ մը 60 դահեկանի 100 նարինջ գնելով, հատը 1 դահեկանի ծախեց. արդ՝ հարիւրին քանի՞ շահեցաւ:

18. Ձի մը գնեցի 73 մէճխօխյէի, եւ կով մը՝ 23 մէճխօխյէի. արդ՝ հարիւրին 16 շահելու համար

ասոնց իւրաքանչիւրը քանի՞ ծախելու եմ:

19. Մարդ մը 500 լիրայի նաւ մը ածուխ գնեց. արդ՝ հարիւրին 12 շահելու համար քանի՞ ծախելու է ածուխը:

20. Եթէ մարդ մը 80 լիրայի կը ծախէ ապրանք մը զոր 90 լիրայի գնած է, հարիւրին քանի՞ վնաս կ'ընէ:

21. Եթէ տանս 5 տարեկանը դրամագլխոյն $\frac{2}{3}$ ին վարձու կու տամ, տարեկան վարձքը դրամագլխոյն հարիւրին քանի՞ն կ'ըլլայ:

22. Աւետիս 100 մէճխօխյէի ապրանք մը գնելով, հարիւրին 10 շահով ծախեց Բենիամինի. եւ Բենիամին նոյն ապրանքը հարիւրին 20 շահով ծախեց Գէորգայ. արդ՝ Գէորգ քանի՞ մէճխօխյէ տուաւ: Եթէ Գէորգ Աւետիսի տար ինչ որ Բենիամինի տուաւ, Աւետիս հարիւրին քանի՞ պիտի շահէր:

23. Քան զբուն արժէքը հարիւրին 20 պակաս ձի մը գնեցի 200 մէճխօխյէի, եւ արժէքին 95 ուղ ծախեցի. արդ՝ քանի՞ մէճխօխյէ շահեցայ:

24. Բուն գնոյն կամ արժէքին $\frac{3}{5}$ ին պարկ մը ալիւր գնելով, քան արժէքը հարիւրին 4 աւելի ծախեցի. արդ՝ ի՞նչ շահեցայ:

25. Գետին մը գնեցի հարիւրին 20 պակաս քան 7 լիրա, եւ ծախեցի հարիւրին 4 աւելի քան 7 լիրա. արդ՝ դեռինը քանի՞ ծախեցի, եւ շահս հարիւրին ո՞րչափ եղաւ:

26. Եթէ Բերիոյ բնակիչները հարիւրին 23 պակաս գնեց քան զբնակիչս Գամասկոսի, Գամասկոսի բնակիչը քան զբնակիչս Բերիոյ հարիւրին քանի՞ աւելի կ'ըլլան:

27. Եթէ ձիու մը համար 168 մէճխօխյէ տամ. սա

պայմանով որ հարիւրին 5 ձիաբուծին ըլլայ, ձիուեն տէրը քանի՞ մէճիտիցէ պիտի առնէ :

28. 150 լիբայի արա մը գնելով՝ ծախեցի հարիւրին 14 փնատու. դարձեալ՝ 360 լիբայի ուրիշ արա մը գնելով՝ ծախեցի հարիւրին 9 շահով. արդ՝ այս երկու առուտուրին մէջ ի՞նչ շահեցայ :

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԱՍ

Ա. Գուժար մը գործածելու համար փոխարէն տրուած ստակը Գոժար կը կոչուի, եւ գործածուած գուժարը Գլուի կամ Դրամաճուրի :

Տարեկան տոկոսի համար զբամազը կոչոյն հարիւրին այսչափ տալ սովորութիւն է :

1. Տարին հարիւրին 6 տոկոսով, 1 լիբային երկու տարեկան տոկոսը ո՞րչափ է :

Լո՛ճո՛ճ : Եթէ տարեկան տոկոսը հարիւրին 6 է, մէկ լիբայի մէկ տարեկան տոկոսը կ'ընէ 6 դահեկան, եւ երկու տարեկանը՝ 12 դահեկան :

2. Տարին հարիւրին 6 տոկոսով, 1 լիբայի 3 տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ : 4 տարուանը : 10 տարուանը :

3. Տարին հարիւրին 4 տոկոսով, 1 լիբայի 2 տարուան տոկոսն ի՞նչ է : 5 տարուանը : 8 տարուանը :

Բ. 1. Տարին հարիւրին 5 տոկոսով, 10 լիբայի 1 տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

Լո՛ճո՛ճ Ա. : Արովհետեւ մէկ լիբայի մէկ տարեկան տոկոսն 5 դահեկան է, 10 լիբայի տոկոսը կ'ընէ 10 անգամ 5, այսինքն 50 դահեկան :

Լո՛ճո՛ճ Բ. : Արովհետեւ տոկոսը զլիսոյն հարիւրին 5ն է, 10 լիբայի տոկոսը հաւասար է 10 լիբայի $\frac{5}{100}$ ին, այսինքն $\frac{1}{20}$ ին, որ է $\frac{1}{2}$ լիբա կամ 50 դահեկան :

2. Տարին հարիւրին 6 տոկոսով, 2 լիբայի 1 տարուան տոկոսն ի՞նչ է : Հարիւրին 5 ով ի՞նչ է : Հարիւրին 8 ով ի՞նչ է :

3. Տարին հարիւրին 6 տոկոսով, 4 լիբայի 1 տարուան տոկոսն ի՞նչ է : 5 լիբային, 7 լիբային, 10 լիբային տոկոսն ի՞նչ է :

4. Տարին հարիւրին 8 տոկոսով, 75 լիբայի 1 տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ : Հարիւրին 10 ով ի՞նչ կ'ընէ : Հարիւրին 12 ով ի՞նչ կ'ընէ :

5. Տարին հարիւրին 6 տոկոսով, 125 լիբայի 1 տարուան տոկոսն ի՞նչ է : Հարիւրին 5 ով ի՞նչ է : Հարիւրին 7 ով ի՞նչ է :

6. Տարին հարիւրին 6 տոկոսով, 50 լիբայի 1 տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ : Հարիւրին 4 ով ի՞նչ է : Հարիւրին 8 ով ի՞նչ է :

Գ. 1. Տարին հարիւրին 6 տոկոսով, 5 լիբայի 4 տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

Լո՛ճո՛ճ Ա. : Արովհետեւ մէկ լիբայի մէկ տարուան տոկոսը 6 դահեկան է, 4 տարուանը կ'ընէ 4 անգամ 6, այսինքն 24 դահեկան. եթէ մէկ լիբայի 4 տարուան տոկոսը կ'ընէ 24 դահեկան, 5 լիբայի 4 տարուան տոկոսն ընելու է 5 անգամ 24, այսինքն 120 դահեկան :

Լո՛ճո՛ճ Բ. : Արովհետեւ մէկ տարուան տոկոսը զլիսոյն հարիւրին 6ն է, 4 տարուանն ըլլալու է զլիսոյն հարիւրին 24ը, այսինքն զլիսոյն $\frac{5}{25}$ ը. արդ՝

3 լիբայի $\frac{1}{5}$ ն է $= \frac{1}{5}$, եւ $\frac{6}{5}$ ը $= \frac{6}{5} = 1 \frac{1}{5}$ լիբա $=$
120 դահեկան :

2. Տարին հարիւրին 6 տոկոսով, 4 լիբայի 3
տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

3. Տարին հարիւրին 3 տոկոսով, 10 լիբայի
5 տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

4. Տարին հարիւրին 10 տոկոսով, 25 լիբայի 6
տարուան տոկոսը ս՞րչափ կ'ընէ :

5. Տարին հարիւրին 6 տոկոսով, 20 լիբայի 3
տարուան տոկոսը ս՞րչափ կ'ընէ :

6. Տարին հարիւրին 8 տոկոսով, 40 լիբայի $7\frac{1}{2}$
տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

7. Տարին հարիւրին $12\frac{1}{2}$ տոկոսով, 300 լիբայի
4 տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

Գ. 1. Տարին հարիւրին 6 տոկոսով, 100 լիբայի
1 ամսուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

Լ.՝Ձ.՝Ձ.՝ Ա. : Որովհետեւ 100 լիբայի մէկ տարե-
կան տոկոսը 6 լիբայ է, մէկ ամսուան տոկոսը կ'ը-
նէ 6 լիբայի $\frac{1}{12}$ ը, այսինքն $\frac{1}{2}$ լիբա, կամ 50 դա-
հեկան :

Լ.՝Ձ.՝Ձ.՝ Բ. : Որովհետեւ մէկ տարուան տոկոսը
ստակին գլխոյն հարիւրին 6 ն է, մէկ ամսուան
տոկոսը կ'ըլլայ մէկ տարուան տոկոսին $\frac{1}{12}$ ը, այ-
սինքն գլխոյն $\frac{1}{100}$ ը :

2. Տարին հարիւրին 12 տոկոսով, 1 լիբայի ամ-
սական տոկոսն ի՞նչ կ'ընէ :

3. Տարին հարիւրին 6 տոկոսով, 90 լիբայի 2
տարուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

4. Տարին հարիւրին 7 տոկոսով, 100 լիբայի 6
ամսուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

5. Տարին հարիւրին 6 տոկոսով, 100 լիբայի 4
տարուան եւ 4 ամսուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

6. Տարին հարիւրին 3 տոկոսով, 400 լիբայի 1
տարուան եւ 8 ամսուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

7. Տարին հարիւրին 3 տոկոսով, 800 լիբայի 1
տարուան եւ 7 ամսուան տոկոսն ի՞նչ կ'ընէ :

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՅԵՐՈՐԳ ԴԱՍ

Ա. Տոկոսը եւ գլուխը միանգամայն կը կոչուին
գումար :

1. Տարին հարիւրին 6 տոկոսով, 40 լիբայի եր-
կու տարուան գումարն ի՞նչ կ'ընէ :

Լ.՝Ձ.՝Ձ.՝ : Որովհետեւ 40 լիբայի 2 տարուան տո-
կոսը 480 դահեկան կ'ընէ, ապա գումարն է $480 +$
 $4000 = 4480$ դահեկան :

2. Տարին հարիւրին 4 տոկոսով, 60 լիբայի գու-
մարը 4 տարուան մէջ ի՞նչ կ'ընէ :

3. Տարին հարիւրին 3 տոկոսով, 80 լիբայի գու-
մարը 3 տարուան մէջ ի՞նչ կ'ընէ :

4. Տարին հարիւրին 4 տոկոսով, 100 լիբայի գու-
մարը 6 տարուան մէջ ի՞նչ կ'ընէ :

5. Տարին հարիւրին 7 տոկոսով, 70 լիբայի գու-
մարը 6 տարուան մէջ ի՞նչ կ'ընէ :

6. Տարին հարիւրին 7 տոկոսով, 150 լիբայի գու-
մարը 2 տարուան մէջ ի՞նչ կ'ընէ :

7. Տարին հարիւրին 7 տոկոսով, 100 լիբայի գու-
մարը 3 տարուան եւ 4 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :

8. Տարին հարիւրին 6 տոկոսով, 25 լիբայի գումարը 6 տարուան եւ 4 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
9. Տարին հարիւրին 12 տոկոսով, 10 լիբայի գումարը 4 տարուան եւ 2 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
10. Տարին հարիւրին 6 տոկոսով, 150 լիբայի գումարն 9 տարուան եւ 1 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
11. Տարին հարիւրին 4 տոկոսով, 200 լիբայի գումարն 2 տարուան եւ 2 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
12. Տարին հարիւրին 8 տոկոսով, 145 լիբայի գումարն 6 տարուան եւ 3 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
13. Տարին հարիւրին $4\frac{1}{2}$ տոկոսով, 400 լիբայի գումարն 2 տարուան եւ 2 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
14. Տարին հարիւրին 5 տոկոսով, 240 լիբայի գումարն 2 տարուան եւ 4 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
15. Տարին հարիւրին 6 տոկոսով, 200 լիբայի գումարն 2 տարուան եւ 6 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
16. Տարին հարիւրին 8 տոկոսով, 15 լիբայի գումարը 6 տարուան եւ 10 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
17. Տարին հարիւրին 6 տոկոսով, 36 լիբայի գումարն 2 տարուան եւ 1 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
18. Տարին հարիւրին 10 տոկոսով, 18 լիբայի գումարը 6 տարուան եւ 8 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
19. Տարին հարիւրին 4 տոկոսով, 20 լիբայի գումարը 5 տարուան եւ 9 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
20. Տարին հարիւրին 8 տոկոսով, 140 լիբայի գումարը 3 տարուան եւ 1 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
21. Տարին հարիւրին 6 տոկոսով, 175 լիբայի գումարը 4 տարուան եւ 8 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :
22. Տարին հարիւրին 3 տոկոսով, 140 լիբայի գումարը 3 տարուան եւ 4 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :

23. Տարին հարիւրին 5 տոկոսով, 160 լիբայի գումարն 9 տարուան մէջ ի՞նչ կ'ընէ :

24. Տարին հարիւրին 6 տոկոսով, 300 լիբայի գումարը 5 տարուան եւ 6 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :

25. Տարին հարիւրին 6 տոկոսով, 250 լիբայի գումարը 1 տարուան եւ 6 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :

26. Տարին հարիւրին 10 տոկոսով, 50 լիբայի գումարը 1 տարուան եւ 3 ամսուան մէջ ի՞նչ կ'ընէ :

Բ. 1. Ո՞րչափ է զրամագլուխը որ տարին հարիւրին 10 տոկոսով, 4 տարուան մէջ 6 լիբա տոկոս կը բերէ :

Լ. — 2. — 5: Եթէ տոկոսը տարին հարիւրին 10 է, 4 տարուան տոկոսը կ'ըլլայ զրամագլխոյն $\frac{4 \cdot 0}{100}$ ը, այսինքն $\frac{2}{5}$ ը. արդ՛ եթէ 6 լիբան զրամագլխոյն $\frac{2}{5}$ ն է, զրամագլխոյն $\frac{1}{5}$ ն է 3, եւ $\frac{2}{5}$ ը՝ 15:

2. Ո՞րչափ է զրամագլուխը որ տարին հարիւրին 4 տոկոսով, 2 տարուան մէջ 8 լիբա տոկոս կը բերէ :

3. Ո՞րչափ է զրամագլուխը որ տարին հարիւրին 3 տոկոսով, 4 տարուան մէջ 6 լիբա տոկոս կը բերէ :

4. Ո՞րչափ է զրամագլուխը որ տարին հարիւրին 6 տոկոսով, 5 տարուան մէջ 10 լիբա տոկոս կը բերէ :

5. Ո՞րչափ է զրամագլուխը որ տարին հարիւրին 8 տոկոսով, 2 տարուան մէջ 10 լիբա տոկոս կը բերէ :

6. Ո՞րչափ է զրամագլուխը որ տարին հարիւրին

1 տոկոսով, 6 տարուան մէջ 20 լիրա տոկոս կը բերէ :

7. ՌՐչափ է զբամազլուխը որ տարին հարիւրին 4 տոկոսով, 1 տարուան եւ 8 ամսուան մէջ 3 լիրա տոկոս կը բերէ :

8. ՌՐչափ է զբամազլուխը որ տարին հարիւրին 6 տոկոսով, 6 տարուան եւ 4 ամսուան մէջ 19 լիրա տոկոս կը բերէ :

9. ՌՐչափ է զբամազլուխը որ տարին հարիւրին 7 տոկոսով, 7 տարուան մէջ 14 լիրա տոկոս կը բերէ :

10. ՌՐչափ է զբամազլուխը որ տարին հարիւրին 4 տոկոսով, 4 տարուան եւ 2 ամսուան մէջ 60 լիրա տոկոս կը բերէ :

Գ. 1. Տարին հարիւրին 6 տոկոսը սՐչափ ժամանակի մէջ զբամազլխոյն կը հաւասարի :

2. Տարին հարիւրին 9 տոկոսը սՐչափ ատենուան մէջ կը հաւասարի զբամազլխոյն :

3. Եթէ տարեկան տոկոսը զբամազլխոյն $\frac{1}{4}$ ին $\frac{3}{7}$ ն է, սՐչափ ժամանակի մէջ կը հաւասարի զբամազլխոյն :

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

1. Եթէ Աւետիսի՝ միշտ 3, եւ Պետրոսի 2 լիրա տալով, գումար մը բաժնենք այն երկուքին, իւրաքանչիւրին բաժինը գումարին սՐչափ մասը կ'ըլլայ :

Լուծում: Եթէ Աւետիսի՝ 3, եւ Պետրոսի 2 լիրա տրուի, երկուքին տրուած կ'ըլլայ 5 լիրա. ապա Աւետիսի բաժինը բաժնուած սասակին $\frac{3}{5}$ ն է, եւ Պետրոսի բաժինը՝ $\frac{2}{5}$ Ը :

2. Եթէ Միհրանայ՝ միշտ 3, եւ Տիգրանայ 5 լիրա տալով 24 լիրա բաժնենք անոնց, իւրաքանչիւրին քանի՞ լիրա կ'իյնայ :

3. Եթէ Յովհաննու միշտ 4, եւ Սիմոնի 3 լիրա տալով, երկուքին 35 լիրա բաժնենք, իւրաքանչիւրին բաժինն ի՞նչ կ'իյնայ :

4. Մարդ մը 660 լիրա թողուց կտակաւ, պատուիրելով այն ստակը բաժնել իւր երկու որդուց, երկուսն միշտ 7 տալով, եւ կրտսերոյն՝ 4. արդ՝ իւրաքանչիւր աղու քանի՞ լիրա բաժին պիտի լինայ :

5. 51 Ը բաժնէ երկուքի, այնպէս որ երկու բաժինը համեմատին իրարու, ինչպէս $\frac{2}{3}$ առ $\frac{3}{4}$:

Լուծում: $\frac{2}{3} = \frac{8}{12}$, եւ $\frac{3}{4} = \frac{9}{12}$. արդ՝ $\frac{2}{3}$ ն ինչպէս կը համեմատի առ $\frac{3}{4}$, նոյնպէս կը համեմատի $\frac{8}{12}$ առ $\frac{9}{12}$, կամ ինչպէս կը համեմատի 8 առ 9. ապա պահանջուած մասանց մէկն է 51 ին $\frac{8}{17}$ Ը այսինքն՝ 24, եւ միւսը՝ 51 ին $\frac{9}{17}$ Ը, այսինքն՝ 27 :

6. 60 Ը բաժնէ երկու մաս, այնպէս որ մասանց մին համեմատի միւսուն այնպէս՝ ինչպէս կը համեմատի 7 առ 5 :

7. 69 թիւը բաժնէ երկու մաս, այնպէս որ մասանց մին համեմատի միւսուն այնպէս՝ ինչպէս կը համեմատի $\frac{5}{6}$ առ $\frac{4}{5}$:

8. Երկու մարդ, մին՝ 4, եւ միւսը 3 $\frac{1}{2}$ մէճիտիյէ

տալով գնեցին 30 քաչ շաքար . արդ՝ իւրաքանչիւրին բաժնին քանի՞ քաչ շաքար կ'իջնայ :

9. Աւետիս՝ 60 լիւրա , եւ Բենիամին՝ 40 լիւրա դրամազուլիս գնելով սկսան ընկերութեամբ առուտուր ընել , եւ շահեցան 75 լիւրա . արդ՝ այս շահէն իւրաքանչիւրին ի՞նչ բաժին կ'իջնայ :

Լո՞՞՞՞՞՞՞ : Որովհետեւ դրամազլտոյն ամբողջ դուժմարը 400 լիւրա է , եւ այս դուժմարին 60 ը , այսինքն $\frac{3}{5}$ ն՝ Աւետիսին , եւ 40 ն , այսինքն $\frac{2}{5}$ ը Բենիամինին է , ապա շահուն $\frac{3}{5}$ ն Աւետիսի , եւ $\frac{2}{5}$ ը Բենիամինի կ'իջնայ :

10. Երեք մարդ 36 մէճիտիլէի վարձեցին մարդակեան մը , եւ երեքէն մին մարդակեանին մէջ կապեց 4 ձի , երկրորդը՝ 3 ձի , եւ երրորդը՝ 5 ձի . արդ՝ իւրաքանչիւրը քանի՞ մէճիտիլէ տալու է :

11. Մարդակեանի մը մէջ Յովնաննէս կապեց 2 օր 3 ձի , եւ Սամուէլ՝ 6 օր 4 ձի , եւ մարդակեանին տիրոջը տուին փոխարէն 6 մէճիտիլէ . իւրաքանչիւրը քանի՞ մէճիտիլէ տուաւ :

Դե՞՞՞՞՞՞՞ : Մարդակեանին մէջ 3 ձիոյ 2 օր մնալը , 2 անգամ 3 , այսինքն 6 ձիոյ մէկ օր մնալուն հաւասար է :

12. 55 ը բաժնէ երկու մաս , այնպէս որ մեծագոյն մասը փոքրագունին $\frac{5}{9}$ ն ըլլայ :

Լո՞՞՞՞՞՞՞ : Եթէ մեծագոյնը փոքրագունին $\frac{5}{9}$ ն է , 55 ը փոքրագունին $\frac{1}{9}$ ը կ'ըլլայ . ապա փոքրագոյնն է 25 , եւ մեծագոյնը՝ 30 :

13. 27 թիւը բաժնէ երկու մաս , այնպէս որ փոքրագոյնը մեծագունին $\frac{2}{3}$ ն ըլլայ :

14. Մարդ մը իւր երեք որդւոց , որոց անուանք

էին Միհրան , Տիգրան եւ Պետրոս , տուաւ 98 դահեկան ծախք ընել ըստ հաճոյս . Միհրանայ բաժինն էր Տիգրանայ բաժնին 2 անգամը , եւ Պետրոսի բաժնին 4 անգամը . արդ՝ իւրաքանչիւրին բաժինը քանի՞ դահեկան էր :

15. Մարիամ ունէր 40 հատ խնձոր . ասոնց երկու հինգերորդը տուաւ իւր դասընկերներուն , եւ մնացորդը բաժնեց իրեն եւ իր երկու քոյրերուն . արդ՝ քանի՞ հատ էին Մարիամայ բաժնին խնկած խնձորները , ենթադրելով թէ ասոնք մէկ հինգերորդն էին անոր քոյրերուն խնկած բաժնին :

16. Շտեմարանի մը մէջ կար չորս տեսակ ընդեղէն . այսինքն՝ կորեակ , կորեկան իբր կրկինը՝ ցորեն , ցորենին իբր կրկինը՝ եգիպտացորեն , եւ եգիպտացորենին իբր եռապատիկը՝ դարի . արդ՝ ենթադրելով թէ բոլոր ընդեղէնք 125 քու էին , իւրաքանչիւր տեսակն առանձին առանձին սփռափ էր :

17. Համբան հանդիպեցայ 11 մուրացկանի , որոց վեցը ծոյլ էր , երեքը՝ կոյր եւ երկուքը կաղ : Ասոնց ամենուն միանգամայն տուի 34 դահեկան սահամեմատութեամբ . իւրաքանչիւր ծոյլի բաժնին եռապատիկը տուի իւրաքանչիւր կուրի , եւ իւրաքանչիւր կուրի բաժնին կրկինը՝ իւրաքանչիւր կաղի . արդ՝ իւրաքանչիւրին քանի՞ դահեկան տուի :

18. Երկու ընկերք , մին՝ 200 եւ միւսը 150 լիւրա գնելով , շահեցան 32 լիւրա . արդ՝ այս շահէն իւրաքանչիւր ընկերի ի՞նչ բաժին կ'իջնայ :

19. Երկու ընկերաց միոյն 50 լիւրան՝ 4 $\frac{1}{2}$ ամիս , եւ միւսին 60 լիւրան 3 $\frac{1}{2}$ ամիս դործածուեցաւ , եւ

եղաւ 11 լիբա շահ. արդ՝ այս շահէն իւրաքանչիւրին ի՞նչ բաժին ինկաւ :

20. Երեք ընկերաց առաջինը դրաւ ընկերութեան դրամագլխոյն $\frac{1}{3}$ Ը, երկրորդը՝ $\frac{2}{5}$ Ը, եւ երրորդը՝ դրամագլխոյն մնացեալ մասը. արդ՝ ենթադրելով թէ երկրորդը եւ երրորդը տուին 480 լիբա, իւրաքանչիւր ո՞րչափ մաս տուաւ դրամագլխէն :

21. Մարդ մը՝ 12 մէճիտիյէ եւ ուրիշ մը՝ 10 մէճիտիյէ տալով վարձու բռնեցին մարդագետին մը. արդ՝ եթէ 12 մէճիտիյէ տուողը մարդագետնին մէջ 6 ձի կը կապէ, 10 մէճիտիյէ տուողը քանի՞ ձի կապելու իրաւունք ունի :

22. Ո՞ր երկու թիւերն են որոյ գումարը հաւասար է $1\frac{2}{5}$ ի, եւ իրարու կը համեմատին այնպէս՝ ինչպէս կը համեմատի $2\frac{1}{2}$ Ը $3\frac{1}{3}$ ի :

23. Երկու մարդ քաղքէ մը ելլելով կ'երթան, մին դէսլ արեւելք՝ ժամը $4\frac{1}{4}$ մղոն տեղ, եւ միւսը դէսլ արեւմուտք՝ ժամը $6\frac{3}{4}$ մղոն. արդ՝ 10 ժամ ետքը ասոնք ո՞րչափ հեռացած կ'ըլլան իրարմէ :

24. Մարդ մը իւր 100 մէճիտիյէին $\frac{1}{2}$ Ը, $\frac{1}{3}$ Ը եւ $\frac{1}{8}$ Ը վատնելէն ետքը, մնացածը հաւասար բաժնեց 3 այրի կանանց. արդ՝ իւրաքանչիւր կնոջ ի՞նչ տուաւ :

25. Մարդ մը հարցուելով թէ ո՞րչափ շահ քաւ, պատասխանեց. «Եթէ շահուա $1\frac{1}{2}$ ինչափ աւելի շահած ըլլայի, հիմա 1,000 լիբա կ'ունենայիւ՛» Արդ՝ այս մարդուն շահը ո՞րչափ էր :

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

1. Եթէ աւազան մը $4\frac{1}{2}$ ժամու մէջ կը լենայ, 1 ժամու մէջ ո՞րչափ լեցուած կ'ըլլայ :

2. Եթէ մարդ մը գործի մը $\frac{1}{5}$ Ը մէկ ժամու մէջ կը կատարէ, բոլոր գործը քանի՞ ժամու մէջ կրնայ կատարել :

3. Գործ մը զոր Միհրան 8 օրը եւ Տիգրան 12 օրը կը կատարեն, երկուքն ի միասին քանի՞ օրուան մէջ կրնան կատարել :

Լո՛ւն-՛՛: Որովհետեւ մէկ օրուան մէջ Միհրան այն գործին $\frac{1}{8}$ Ը, եւ Տիգրան $\frac{1}{12}$ Ը կը կատարեն, երկուքն ի միասին կրնան կատարել մէկ օրուան մէջ այն գործին $\frac{1}{8} + \frac{1}{12}$ Ը, այսինքն՝ $\frac{3}{24} + \frac{2}{24} = \frac{5}{24}$ Ը: Արդ՝ եթէ երկուքը միանգամայն մէկ օրուան մէջ գործին $\frac{5}{24}$ Ը կը կատարեն, գործին $\frac{24}{5}$, այսինքն ամբողջ գործը պիտի կատարեն այնչափ օրուան մէջ՝ ո՞րչափ $\frac{5}{24}$ կայ $\frac{24}{5}$ ին մէջ, այսինքն՝ $4\frac{4}{5}$:

4. Երկու մարդիկ, որոյ իւրաքանչիւրը գործի մը $\frac{2}{3}$ Ը կրնայ կատարել, եթէ մէկտեղ գործեն, այն գործը քանի՞ օրուան մէջ կրնան կատարել :

5. Արաբ զոր Սարգիս 16 օրը կրնայ հնձել, եւ Պետրոս՝ 20 օրը, երկուքը միանգամայն քանի՞ օրը կրնան հնձել :

6. Աւազանի մը 3 խողովակէն ջուր կու գայ. ենթադրելով թէ խողովակաց մին կը լեցնէ աւազանը 2 ժամու մէջ, երկրորդը՝ 3 ժամու, եւ երրորդը՝ 6 ժամու մէջ. արդ՝ երեքը միանգամայն հասելով, քանի՞ ժամու մէջ կրնան լեցունել աւազանը :

7. Եթէ աւազանի մը երկու խողովակները, որոյ

մին աւազանը կը լեցնէ 2 ժամու մէջ եւ միւսը կը պարպէ 3 ժամու մէջ, միանգամայն բացուին, աւազանը քանի՞ ժամու մէջ կը լեցուի :

8. Աւազան մը ունի 4 խողովակ, որոց առաջինը կը լեցունէ աւազանը 2 ժամու մէջ, երկրորդը՝ 3 ժամու եւ երրորդը՝ 4 ժամու մէջ, իսկ չորրորդը 2 ժամու մէջ կը պարպէ աւազանը. արդ՝ եթէ խողովակաց չորսն ալ բաց ըլլան, աւազանը քանի՞ ժամու մէջ կը լեցուի :

9. Պետրոս միայն աշխատելով քանի՞ օրուան մէջ կրնայ շինել պատ մը, զոր Տիգրան եւ Միհրան՝ 16 օրուան մէջ, իսկ Պետրոս ալ մէկտեղ առնելով, 10 օրուան մէջ կը շինեն :

10. Միքայէլ $\frac{1}{2}$ օր հնձեց արտ մը զոր Ղաւթիմ՝ $\frac{6}{5}$ օրը, Սամուէլ՝ $\frac{3}{4}$ օրը, եւ Միքայէլ 1 օրը կրնայ հնձել. արդ՝ երեքը միանգամայն աշխատելով արտին մնացեալ մասը քանի՞ օրը կրնան հնձել :

11. Տիգրան $\frac{2}{3}$ օրը, Միհրան $\frac{3}{4}$ օրը եւ Տիգրան $\frac{3}{5}$ օրը կրնան կտորել շեղ մը փայտը. Տիգրան եւ Միհրան այս փայտէն մաս մը $\frac{1}{4}$ օր կտորեցին, փայտին մնացած մասը Միհրան ո՞րչափ ատենուան մէջ կրնայ կտորել :

12. 24 բաժնէ երկու մաս, այնպէս որ մին առ միւսն համեմատի այնպէս՝ ինչպէս կը համեմատի $1\frac{2}{3}$ առ 3 :

13. 32 ը բաժնէ երեք մաս, այնպէս որ այս երեք մասունք իրարու այնպէս համեմատին ինչպէս կը համեմատին առ իրեարս $3\frac{1}{3}$, $1\frac{3}{4}$ եւ $1\frac{1}{4}$:

14. Այն գործը զոր Միհրան եւ Տիգրան միանգամայն 15 օրուան մէջ կը կատարեն՝ Տիգրան մի-

նակ աշխատելով կը կատարէ 24 օրուան մէջ. արդ՝ Միհրան քանի՞ օրուան մէջ պիտի կրնայ կատարել, եթէ մինակ աշխատի :

15. Գաւթի դրամազլխոյն իւրաքանչիւր $\frac{1}{4}$ լիւրային փոխարէն՝ Սողոմոն դրաւ 7 լիւրա, եւ իւրաքանչիւր 8 լիւրային փոխարէն՝ Սամուէլ դրաւ 5 լիւրա, եւ այսպէս երեքը միանգամայն դրին 540 լիւրա դրամազլուիս. արդ՝ իւրաքանչիւրը քանի՞ լիւրա դրամազլուիս դրաւ :

16. 86 թիւը բաժնէ երկու մաս, այնպէս որ մէկ մասն ըլլայ միւս մասին $5\frac{1}{7}$ անգամը :

17. 50 թիւը բաժնէ երեք մաս, այնպէս որ առաջին մասն ըլլայ երկրորդ մասին $\frac{2}{3}$ ը, եւ երրորդ մասն ըլլայ առաջին եւ երկրորդ մասերուն միանգամայն 3 պատիկը :

18. Ա ին, Բ ին եւ Գ ին պիտի բաժնուէր 400 լիւրա, այնպէս որ առոնց բաժիններն համեմատէին իրարու այնպէս՝ ինչպէս կը համեմատին իրարու $\frac{1}{2}$ ը, $\frac{1}{4}$ ը եւ $\frac{1}{8}$ ը, բայց Գ յանկարծ մեռաւ. արդ՝ եթէ յիշեալ գումարը ողջ մնացող Ա ին եւ Բ ին բաժնուի վերոյիշեալ համեմատութեամբ, իւրաքանչիւրին քանի՞ լիւրա կ'իյնայ :

19. Արշակ եւ Պետրոս հաւասար դրամազլուիս դնելով, շահեցան 140 մէճիտիյէ : Արշակայ դրամազլուիսը գործածուեցաւ $3\frac{1}{3}$ ամիս, եւ Պետրոսինը՝ $2\frac{1}{2}$ ամիս. արդ՝ վերոյիշեալ շահէն իւրաքանչիւրին ինչ բաժին ինկաւ :

20. 12 կով գնեցի՝ իւրաքանչիւրը $12\frac{1}{2}$ մէճիտիյէի, եւ գնոյն փոխարէն տուի կառքը $7\frac{1}{2}$ մէճիտիյէ արժող փայտ. արդ՝ քանի՞ կառք փայտ տուի :

21. Եթէ 6 մէճխտիյէի պաշարը 5 մարդու 7 օր կը բաւէ, 10 մարդու քանի՞ օր կը բաւէ :

Լուծում: Եթէ այնչափի պաշարը 5 մարդու 7 օր կը բաւէ, 1 մարդու 5 անգամ 7 օր պիտի բաւէ, այսինքն՝ 35 օր. եթէ մէկ մարդու 35 օր կը բաւէ, 10 մարդու պիտի բաւէ 35 ին $\frac{1}{10}$ ր, այսինքն 3½ օր :

22. Եթէ պարկ մը պարքամատ 12 հողւոյ 20 օր կը բաւէ, 16 մարդու քանի՞ օր պիտի բաւէ : 36 մարդու քանի օր. 40 մարդու քանի օր :

23. Եթէ 40 ոտք բարձր սեան մը շուքը 25 ոտք է, 16 ոտք բարձր սեան շուքը քանի՞ ոտք կրնայ ըլլալ : 30 ոտք շուք ձգող սեան բարձրութիւնը քանի՞ է :

24. Եթէ մարդ մը օրը 8 ժամ աշխատելով 5 օրուան մէջ կ'աւարտէ գործ մը, նոյն գործը 4 օրուան մէջ աւարտելու համար օրը քանի՞ ժամ աշխատելու է : Եթէ օրը 6 ժամ աշխատի, քանի՞ օրը կրնայ աւարտել :

25. Եթէ 8 գրիւ գարին 7 ձիու 5 օր կը բաւէ, 16 գրիւք 4 ձիու քանի՞ օր պիտի բաւէ :

26. Եթէ կառք մը խոտ 8 կովու 7 օր կը բաւէ, 11 կովու քանի՞ օր կրնայ բաւել :

27. Եթէ կառք մը խոտ 7 կովու 8 օր կը բաւէ, 14 օրը քանի՞ կովու կրնայ բաւել :

28. Եթէ 40 գրիւ գարին 5 ձիու 6 եօթնեակ կը բաւէ, 15 ձիու 8 եօթնեակ բաւական ըլլալու համար ո՞րչափ գրիւ հարկաւոր է :

29. Եթէ 7 մարդ 4 օրը 8 կանգուն պատ կը շինէ,

14 մարդ 32 կանգուն պատը քանի՞ օրուան մէջ կրնայ շինել :

30. Եթէ 2 եղ, կամ 3 կով, 18 եօթնեկի մէջ 3 կառք խոտ կ'ուտեն, 6 եղ եւ 1 կով 9 եօթնեկի մէջ քանի՞ կառք խոտ կ'ուտեն :

31. Եթէ 8 մարդ 20 օրը 30 կանգուն պատ կը շինեն, 10 մարդ 15 կանգուն պատը քանի՞ օրուան մէջ կրնայ շինել :

32. Եթէ մարդ մը օրը 10 ժամ աշխատելով 20 օրուան մէջ կը շինէ 30 կանգուն պատ, 10 մարդ օրը 9 ժամ աշխատելով քանի՞ օրուան մէջ կրնան շինել 45 կանգուն պատ մը :

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

1. Եթէ 24 կնոջ ձեռքով կատարուելու գործը 6 այր կը կատարէ, եւ 6 աղու ձեռքով կատարուելու գործը 4 կին կը կատարէ, 18 աղու գործը կատարելու համար քանի՞ այր հարկաւոր է :

2. Եթէ 5 քաշ պանրոյ գինը հաւասար է 2 քաշ ձիթոյ գնոյն, եւ 6 քաշ ձիթոյ գինը հաւասար է 2 քաշ ցորենոյ գնոյն, քանի՞ քաշ պանրով 4 քաշ ցորեն կրնայ գնուիլ :

3. 5 մարդ օրը 10 ժամ աշխատելով քանի՞ օրուան մէջ կրնայ շինել նաւակ մը, զոր 3 մարդ օրը 12 ժամ գործելով 12 օրը կը շինէ :

4. Եթէ $2\frac{1}{4}$ մէճիտիցէիւ պարկ մը ալեր $\frac{3}{8}$ ը կը գնուի, $4\frac{1}{2}$ մէճիտիցէիւ քանի՞ պարկ ալիւր կը զընուի :

5. Եթէ $2\frac{3}{8}$ քոս ցորենը $1\frac{1}{3}$ մէճիտիցէի կը գնուի, $\frac{3}{8}$ քոս ցորենը քանի՞ մէճիտիցէ կ'ընէ :

6. Եթէ 7 ձի մէկ տարուան մէջ 16 կառք խոտ կ'ուտէ, 5 ձի մէկ տարուան մէջ քանի՞ կառք խոտ կ'ուտէ :

7. Եթէ 12 մարդ 4 օրը կրնայ փորել հոր մը, 15 մարդ քանի՞ օրուան մէջ կրնայ փորել նոյն հորը :

8. 240 քաշ եզան մտց, որոյ քաշը 11 դահեկանի գնեցի, կէսը ծախեցի քաշը 13 դահեկանի, եւ միւս կէսը ծախեցի քաշը 14 դահեկանի. արդ՝ քանի՞ դահեկան շահեցայ :

9. 25 կանգուն ասուոյ փոխարէն, զոր գնած եմ կանգունը 6 մէճիտիցէի, տուի կառքը 7 մէճիտիցէ արժող փայտ. արդ՝ քանի՞ կառք փայտ տուի :

10. Ի՞նչ են այն երկու թիւերը որոց գումարը 5, եւ տարբերութիւնը 3 է :

Լուծում: Որովհետեւ մեծ թիւը քան զփոքրը 3 աւելի է, անոնց գումարը, այսինքն 5, 3 աւելի կ'ըլլայ քան փոքրին կրկինը. ուրեմն փոքրին կըրկինն է 5—3, այսինքն 2, եւ փոքրը՝ 1. Իսկ մեծ թիւն է 1+3, այսինքն 4 :

Կանոն: Երկու որ եւ իցէ տարբեր թուոյ գումարն անոնց տարբերութեան վրայ եթէ յաւելնայ, գումարին կէսն այն երկու թուոց մեծագոյնն է :

Եւ եթէ երկուքին գումարէն անոնց տարբերութիւնը հանուի, մնացածին կէսը փոքր թիւն է :

11. Ի՞նչ են այն երկու թիւերը որոց գումարն է 17, եւ տարբերութիւնը՝ 5 :

12. 65 ը երկու մաս բաժնէ, այնպէս որ մէկ մասը քան զմիւսը 19 աւելի ըլլայ :

13. Երկու տղայք իրենց ստակները համբելով գտան որ երկուքին ստակին գումարն էր 54, եւ տարբերութիւնը 46. արդ՝ իւրաքանչիւրին ստակը ո՞րչափ էր :

14. Ի՞նչ են այն երկու թիւերը որոց գումարն է $7\frac{1}{6}$ եւ տարբերութիւնը $2\frac{1}{6}$:

15. Ի՞նչ կ'ընէ $3\frac{1}{3}$ պարկ ալիւրը, եթէ 25 պարկը 131 $\frac{1}{4}$ մէճիտիցէ կ'արժէ :

16. Ի՞նչ է այն թիւը որոյ $\frac{1}{4}$ ը, $\frac{1}{2}$ ը եւ $\frac{1}{3}$ ը եթէ վրան աւելնայ, գումարը կ'ընէ 39 :

17. 100 մէճիտիցէն բաժնէ Բենիամինի, Աւետիսի եւ Գէորգայ, այնպէս որ Բենիամինի բաժինը 20 աւելի ըլլայ քան զԱւետիսինը, եւ Գէորգայ բաժինը 15 պակաս ըլլայ քան զԲենիամինինը :

18. Ի՞նչ են այն երկու թիւերը որոց տարբերութիւնն է 5, եւ փոքրը մեծին $\frac{5}{8}$ ն է :

19. Եթէ ապրանք մը քաշը $6\frac{1}{2}$ ի գնելով $8\frac{1}{8}$ ի ծախեմ, հարիւրին քանի՞ կը շահիմ :

20. Գործաւոր մը 20 օրուան համար վարձուրնուեցաւ սա սրայմանով, որ այն օրերը որ գործէր՝ աւնուր $1\frac{1}{2}$ մէճիտիցէ վարձ, իսկ այն օրերը որ չգործէր՝ $\frac{1}{2}$ մէճիտիցէ տուժէր. 20 օրուան վերջը տեսնուեցաւ որ գործաւորը 18 մէճիտիցէ առած էր. արդ՝ այս մարդը քանի՞ օր գործած էր :

21. Գործաւոր մը 30 օրուան համար վարձու բռնուեցաւ սա պայմանով, որ այն օրերը որ գործէր՝ 2 մէճիտիցէ վարձ առնուր, եւ ան օրերը որ չգործէր՝ $\frac{3}{4}$ մէճիտիցէ կերողչէք տար. 30 օրուան վերջը տեսնուեցաւ որ գործաւորը 38 մէճիտիցէ շահած էր. արդ՝ այս մարդը քանի՞ օր աշխատած էր:

22. Գէորդ 2 ամօք մեծ է քան զՅակոբոս, եւ 3 ամօք փոքր է քան զԱւետիս, իսկ Սամուէլի տարիքը հաւասար է Գէորդայ եւ Յակոբոսի տարեաց, եւ չորսին տարիքը միանգամայն 29 է. արդ՝ իւրաքանչիւրին տարիքը քանի՞ է:

23. Գայլ մը ոչխարաց հօտէն 17 ոչխար խեղդեց. արդ՝ ենթադրելով թէ խեղդուած ոչխարք հօտին հարիւրին $\frac{5}{3}$ ն էին, ողջ մնացող ոչխարք քանի՞ էին:

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

1. Գպրոցի մը աշակերտաց $\frac{1}{8}$ ը կը սորվի գրահաշիւ, եւ $\frac{1}{4}$ ը՝ երկրաչափութիւն, իսկ մնացեալները կը սորվին թուաբանութիւն. արդ՝ իւրաքանչիւր դասի տղայք գպրոցին բոլոր տղոց հարիւրին քանի՞ն են:

2. Յովսէփ որ օրը $1\frac{1}{5}$ մէճիտիցէ կը շահի, եթէ շաբաթը $3\frac{1}{2}$ մէճիտիցէ կերողչէք, եւ ուրիշ պիտոյից համար մնացեալ շահուն $\frac{1}{3}$ ը տայ, չորս շաբթուան մէջ ի՞նչ կը մնայ քովը:

3. Եթէ երկու մարդոց մին 15 օրուան մէջ կը

հնձէ արտ մը զոր երկուքը միանգամայն 10 օրուան մէջ կրնան հնձել, միւսը մինակ աշխատելով քանի՞ օրուան մէջ պիտի կրնայ հնձել արտը:

4. Զկան մը գլուխը 7 մատ երկայն է, եւ պոչին երկայնութիւնը մարմնոյն մէկ երրորդին եւ գլխուն չափ է, իսկ մարմնոյն երկայնութիւնն է գլխուն եւ պոչին հաւասար. արդ՝ ձկան ամբողջ հասակը քանի՞ մատ է:

5. Պաթմանն 8 զահեկանի 10 պաթման կաթին մէջ ո՞րչափ ջուր խառնուելու է որ պաթմանը 7 զահեկանի ծախուի առանց մնասու:

6. Աւետիս՝ ժամը 5, եւ Պետրոս ժամը 7 մղոն կրնայ քալել. արդ՝ եթէ երկուքը միանգամայն մի եւ նոյն կողմը երթալով ճամբայ ելլեն դառնալ կողոյց մը շրջապատը որ 20 մղոն է, Պետրոս քանի՞ ժամէն կը հասնի Աւետիսի:

7. Ժամացոյց մը, չլթայն եւ բանալին 125 մէճիտիցէ կ'արժեն, բայց ժամացուցին գինը չլթայն գնոյն 5 ապատիկն է, եւ բանալոյն 20 ապատիկը. արդ՝ իւրաքանչիւրին գինն ի՞նչ է:

8. Խուսմը մը ոչխար գնեցի իւրաքանչիւրը $2\frac{1}{2}$ մէճիտիցէի, եւ ոչխարաց $\frac{1}{4}$ ը կորեաւ. արդ՝ մնացեալներուն իւրաքանչիւրը քանի՞ ծախելու եմ որ, եթէ ոչ շահ, գէթ մնաս չ'ընեմ:

9. Մարդ մը իւր ստացուածոց $\frac{1}{3}$ ը տուաւ կնոջը, մնացածին $\frac{1}{4}$ ը՝ որդւոյն, եւ վերջին մնացորդին $\frac{2}{9}$ ը տուաւ աղջկանը. գնելով թէ ասոնց արբուած ստակին գումարն էր 900 լիրա, մարդուն բոլոր ստացուածը ո՞րչափ էր:

10. Մատի մը խնձորներուն $\frac{1}{4}$ ը տուի Միհրանայ,

եւ մնացածին $\frac{2}{3}$ ը Տիրանայ, եւ ծառին վրայ մնաց 27 խնձոր. Ի սկզբան քանի՞ խնձոր կար ծառին վրայ :

11. Չորս անձինք վարձու բռնեցին արօտ մը 16 մէճիտիցէի. առաջինը կապեց 6 ձի, երկրորդը՝ 8 ձի, երրորդը՝ 4 ձի, իսկ չորրորդը տուաւ ստակին $\frac{1}{10}$ ը. արդ՝ այս վերջինը քանի՞ ձի կապելու իրաւունք ունի արօտը :

12. Կառք մը ծախելով 30 մէճիտիցէի, հարիւրին 20 վնաս ըրի. արդ՝ հարիւրին 20 շահելու համար քանի՞ ծախելու էի կառքը :

13. Եթէ 4 ձի 6 օրը 21 դրիւ գարի կ'ուտեն, 8 ձի 12 օրը քանի՞ դրիւ պիտի ուտեն :

14. Եթէ $4\frac{1}{2}$ քոռ ցորենը 9 $\frac{3}{20}$ մէճիտիցէ կ'արժէ, $\frac{2}{3}$ քոռն ի՞նչ կ'ընէ :

15. 3 հոգի գործ մը կ'աւարտեն 10 ժամու մէջ. արդ՝ եթէ ուրիշ 2 ընկեր եւս գտնեն, քանի՞ ժամու մէջ կրնան աւարտել այն գործը :

16. Եթէ 30 ոտք բարձր սեան մը շուքը 20 ոտք է, որչափ է ուրիշ սեան մը բարձրութիւնը որ 25 ոտք երկայն շուք կը ձգէ :

17. 5 հատը 2 դահեկանի 60 նարինջ գնեցի, եւ կէսը ծախեցի 2 հատը 1 դահեկանի, եւ միւս կէսը՝ 3 ը 1 դահեկանի. արդ՝ ի՞նչ շահեցայ :

18. Յովսէփի գնեց 26 դահեկանի գնդակ. ասոնց $\frac{3}{5}$ ը գնած էր 8 հատը մէկ դահեկանի, եւ $\frac{3}{10}$ ը՝ 2 հատը մէկ դահեկանի, եւ մնացածները՝ մէյմէկ դահեկանի. արդ քանի՞ գնդակ գնած էր :

19. Մարդ մը 6 սնտուկ խնձոր եւ 2 սնտուկ տանձ ծախած է 23 մէճիտիցէի, տանձին համար

խնձորին կրկին գինն առնելով. արդ՝ տանձը քանի՞ մէճիտիցէ բռնեց, եւ խնձորը՝ քանի՞ :

20. Կերպասը, զոր կանգունը $3\frac{1}{2}$ մէճիտիցէի ծախելով հարիւրին 12 $\frac{1}{2}$ վնաս ըրի, եթէ կանգունը 3 մէճիտիցէի ծախեմ, իւրաքանչիւր կանգունին որչափ վնաս կ'ընեմ :

21. Ի՞նչ էր բուն գին ցորենին որոյ $\frac{1}{2}$ ը $\frac{2}{3}$ ին գնովը ծախելով շահեցայ 16 մէճիտիցէ :

22. Գէորդ ունի այնչափ ստակ որ կրնայ 2 $\frac{1}{2}$ քաշ շագանակ գնել. Ռափայէլի ստակը Գէորդայ ստակին կրկինն է, եւ Սարգսիւնը՝ Ռափայէլի ստակին $\frac{1}{3}$ ը. արդ՝ ենթադրելով թէ երեքին միանգամայն ստակ 55 դահեկան է, շագանակին քաշը քանի՞ է, եւ իւրաքանչիւրին ստակը՝ որչափ :

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԴԱՍ

1. Հարիւրին 20 շահելու համար քանի՞ ծախելու եմ կերպասին կանգունը, զոր կանգունը $1\frac{1}{4}$ մէճիտիցէի ծախելով հարիւրին 16 $\frac{2}{3}$ վնաս ըրի :

2. Այգի մը ունիմ որոյ գետինը կանաչեղէնի պարտէզիս $\frac{2}{3}$ ին չափ է, եւ պարտէզ մը ունիմ որոյ գետինը այգուոյ $\frac{1}{4}$ ին չափ է. արդ՝ ենթադրելով թէ երեքը, այգին, կանաչեղէնի պարտէզը եւ պարտէզս, միանգամայն 17 արտավար են, իւրաքանչիւրը քանի՞ արտավար է :

3. Տակառ մը գինւոյ $\frac{2}{3}$ ը վաղեց, եւ գինեպանը մնացածին $\frac{1}{2}$ ին չափ ջուր դնելով տակառը, գին-

ւոյն բուն գնոյն $\frac{4}{3}$ ին ծախեց քաշը . արդ՝ դրամաւ գըլխէն ո՞րչափ մնաս ըրաւ :

4. Քան զ $\frac{1}{2}$ ստակին 3 մէճիտիցէ աւելի դումար մը տուի մարդու մը , եւ քան զկէսն 6 մէճիտիցէ աւելի դումար մը տուի ուրիշի մը , եւ քովս մնաց 7 մէճիտիցէ աւելի . արդ՝ ի սկզբան քովս քանի՞ մէճիտիցէ կար :

5. Ոչխարի մը զինը քան զգին ուրթուն աւելի է 2 մէճիտիցէ , եւ կովի մը զինը ուրթուն գընոյն $2\frac{1}{2}$ ին , միանգամայն ոչխարին գնոյն չափ է , իսկ երեքին զիներուն դումարը ուրթուն գնոյն $6\frac{1}{2}$ անգամին հաւասար է . արդ իւրաքանչիւրին զինը ո՞րչափ է :

6. Ստակին $\frac{1}{3}$ ը ծախք ըրի , եւ քան զ $\frac{1}{4}$ մնացելոյն 3 մէճիտիցէ աւելի շահելով , ստակս եղաւ 18 մէճիտիցէ աւելի քան զ $\frac{5}{8}$ ն առաջնոյն . արդ՝ առաջ քանի՞ մէճիտիցէ ունէի :

7. Մովսէս իւր ստակին $\frac{3}{8}$ ը ծախք ըրաւ . եթէ այս վասնուած դումարին քան զ $\frac{1}{2}$ ը 1 մէճիտիցէ պակաս ծախք ընէր , քովը պիտի մնար քան այժմու ստակը 25 մէճիտիցէ աւելի . արդ՝ առաջ քանի՞ մէճիտիցէ կար քովը :

8. Ենթադրենք թէ Տիգրան քան զՄիհրան 1 $\frac{1}{2}$ աւելի կը գործէ . արդ՝ ասոնց իւրաքանչիւրը քանի՞ օրուան մէջ կրնայ աւարտել գործ մը՝ զոր երկուքն ի միասին 18 օրը կրնան աւարտել :

9. Ո՞ր երկու թիւերն են որոց դումարն հետ որ է 19 , մէկուն 2 անգամը եթէ միւսին 5 անգամին վրայ աւելնայ , գումարը կ'ըլլայ 74 :

10. Վարդան Պետրոսի հետ ընկեր ըլլալով անոր

դրամագլխոյն $\frac{1}{3}$ ին 4 պատիկը տուաւ , եւ երկուքին դրամագլուխը եղաւ 168 լիրա . արդ՝ ենթադրելով թէ Վարդան եւ Պետրոս 70 լիրա շահեցան , այս շահն իւրաքանչիւրին բաժնին ի՞նչ կ'իյնայ :

11. Սըշակ եւ Պետրոս ունին 54 ոչխար . ենթադրենք թէ Սըշակայ ոչխարները 15 աւելի են քան զկէս ոչխարաց Պետրոսի . արդ՝ ասոնց իւրաքանչիւրը քանի՞ ոչխար ունի :

12. Ո՞րչափ է մարդու մը դրամագլուխը որ 90 լիրա տոկոս կը բերէ , ենթադրելով թէ ստակին $\frac{3}{8}$ ը հարիւրին 5 ուլ եւ մնացածը հարիւրին 6 ուլ շահու տրուած է :

13. 27 $\frac{1}{2}$ ը բաժնէ երկու մաս այնպէս որ այս մասերն այնպէս համեմատին իրարու , ինչպէս կը համեմատի 2 $\frac{1}{2}$ ն առ 6 $\frac{2}{3}$:

14. Աւազանի մը երեք խողովակներէն առաջինը կը լեցունէ աւազանը 1 $\frac{1}{3}$ ժամու մէջ , երկրորդը՝ 2 ժամու մէջ , իսկ երրորդը կը պարպէ աւազանը 1 $\frac{1}{7}$ ժամու մէջ . արդ՝ եթէ խողովակներուն երեքն ալ բացուին , աւազանը ո՞րչափ աստեղծուան մէջ կը լեցուի :

15. Ո՞ր երկու թիւն է որոց գումարն է 5 $\frac{3}{8}$, եւ տարբերութիւնը 1 $\frac{1}{8}$:

16. Սարգսի , Յովհաննու եւ Պետրոսի ստակները , որ հարիւրին 5 տոկոսով շահու տրուած են , իրարու կը համեմատին այնպէս՝ ինչպէս $\frac{1}{3}$, $\frac{1}{4}$ եւ $\frac{1}{6}$ կը համեմատին իրարու , եւ կը բերեն 90 լիրա տոկոս . արդ՝ իւրաքանչիւրին դրամագլուխը ո՞րչափ է :

17. Աղլիկ մը հարցուելով թէ քանի՞ տարեկան էր , պատասխանեց , չայրս 30 տարի մեծ է քան

դըրյոս, և ևրկուքին տարիներուն տարբերութեան 8 $\frac{1}{3}$ անդամը հօրս տարիներուն 5 ապատիկն է. և ևթէ հօրս տարիներուն 3 ապատիկն լրաց աւելնայ քրոջս տարիներուն 6 պատիկը, գումարին $\frac{1}{3}$ ը 9 աւելի կ'ըլլայ քան իմ տարիներուս 4 $\frac{1}{2}$ անդամը. արդ՝ ասոնց իւրաքանչիւրին տարիքն ի՞նչ էր :

18. Քաշ մը որիցը $\frac{2}{3}$ քաշ շաքարի գինն է. արդ՝ եթէ 6 քաշ որից և 10 քաշ շաքարը միանգամայն 126 դահեկան են, 5 քաշ որից և 7 քաշ շաքարը քանի՞ դահեկան կ'ընեն :

19. Ագարակէս ծախեցի մաս մը որ 6 արտավար աւելի էր քան աղարակիս $\frac{2}{3}$ ը, և մնաց 12 արտաւարի 4 $\frac{1}{2}$ անդամին $\frac{3}{4}$ ը. արդ՝ քանի՞ արտավար էր այն մասը զոր ծախեցի :

20. Մարդ մը մուրացկաններու հանդիպելով, հաշուեց որ եթէ իւրաքանչիւրին 3 դահեկան տար, քովը պիտի մնար 8 դահեկան, և եթէ իւրաքանչիւր մուրացկանի 5 դահեկան տար, պիտի պակասէր 6 դահեկան. արդ՝ քանի՞ դահեկան ունէր :

21. Եթէ ստակիս $\frac{2}{3}$ էն զոր ծախք ըրի, 1 $\frac{2}{3}$ մէծիտիցէ պակաս ծախք ընէի, ծախքս պիտի ըլլար ճիշդ ստակիս $\frac{1}{3}$ ը. արդ՝ որչափ էր ստակս :

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

1. Հարիւրին 30 շահելու համար քանի՞ ծախելու էի ժամացոյցը, զոր 35 մէծիտիցէի ծախելով հարիւրին 25 վնաս ըրի :

2. Արշակ 40 քայլ առաջ է քան զՄիհրան. ևն թաղրելով թէ, մինչ Միհրան 9 քայլ կ'երթայ Արշակ 6 քայլ կ'երթայ, Միհրան քանի՞ քայլ երթալու է որ Արշակայ հասնի :

3. Մարդ մը ստակին $\frac{1}{4}$ ը 6 ամսուան մէջ, և մնացածին $\frac{3}{4}$ ը 8 ամսուան մէջ վառնելէն ետքը, քովը մնաց 100 լիրա. արդ՝ այս մարդն ի սկզբան քանի՞ լիրա ունէր :

4. Մարդ մը հանդիպելով ուրիշ մարդու մը որ խումբ մը սագ կը տանէր, ըսաւ անոր. «Քարեւ, ով հարիւր սագ ունեցող :» Սաղպանը պատասխանեց. «Նս հարիւր սագ չունիմ, բայց սագերուս վրայ եթէ աւելցուի անոնց $\frac{1}{2}$ ը և 2 $\frac{1}{2}$ սագ, սագերուս թիւը կ'ըլլայ 100. արդ՝ այս սագպանը քանի՞ սագ ունէր :

5. 42 մէծիտիցէիլ գնեցի պարկը 7 մէծիտիցէ արժող ալիւր, և պարկը 8 մէծիտիցէի ծախելով փոխանակ գնեցի կանգունը 3 մէծիտիցէի կերպաս, և ասոր ալ կանգունը 4 մէծիտիցէի ծախելէն ետքը, այն ստակէն 10 մէծիտիցէ ծախք, և 6 մէծիտիցէ վնաս ըրի. արդ՝ մնացած ստակով քաշը 2 մէծիտիցէ արժող չայէ քանի՞ քաշ կրնամ գրնել :

6. Քաշը 16 դահեկան արժող 1 $\frac{3}{4}$ քաշ սրճոյ, և քաշը 8 դահեկան արժող 2 $\frac{1}{2}$ քաշ խիժի, և քաշը 15 դահեկան արժող 2 $\frac{1}{3}$ քաշ թղոյ, և քաշը 9 դահեկան արժող 4 $\frac{1}{3}$ քաշ շաքարի, և քաշը 40 դահեկան արժող 1 $\frac{2}{3}$ քաշ չպի, և քաշը 32 դահեկան արժող $\frac{3}{4}$ քաշ բամբակի գիներուն գումարը ո՞րչափ է :

7. Գարեգին խնձոր ծախսեց 2ը 20 փողի. Տիգրան եւս նոյնչափ խնձոր ունէր եւ ծախսեց 3ը 20 փողի. Ենթադրելով թէ ստակը զոր Գարեգին առաւ խնձորներէն 12 քսաննոց աւելի էր քան զՏիգրանինը, իւրաքանչիւր քանի՞ խնձոր ունէր:

8. Գող մը կարասի մը 20 քաշ զինւոյն $\frac{1}{4}$ ը զողնալով նոյնչափ ջուր դրաւ կարասը. հետեւեալ գիշերը նորէն գալով կարասին զինւոյն դարձեալ $\frac{1}{4}$ ը զողցաւ եւ փոխանակ նոյնչափ ջուր դրաւ. արդ՝ կարասին մէջ քանի՞ քաշ զինի եւ քանի՞ քաշ ջուր մնաց:

9. Ի՞նչ թիւ է այն որոյ $2\frac{1}{2}$ անգամին վրայ թուոյն $\frac{1}{3}$ ը եթէ յաւելնայ, թիւը կ'ըլլայ $5\frac{1}{2}$ պակաս քան իւր 3 ապատիկը:

10. Ի՞նչ է պատճառ որ, որեւիցէ թուոյ $\frac{1}{2}$ ին վրայ եթէ $\frac{1}{3}$ ն աւելցուի եւ դուժարը թուոյն $\frac{1}{6}$ ու վը բաժնուի, քանորդը կ'ըլլայ միշտ 5:

11. Ո՞ր երկու թիւերն են որոյ դուժարն է 50, եւ եթէ փոքրագոյնը հանուի անոնց դուժարին կրկինէն, 77 կը մնայ:

12. Անտոն ըսաւ Սինեքերիմայ. «Մեր տարիներուն դուժարին կէսին վրայ եթէ յաւելուի քու տարիներուդ կէսը, դուժարը կ'ըլլայ իմ տարիներուս $\frac{3}{4}$ ը, եւ ես քան զքեզ 12 տարի մեծ եմ.» արդ՝ անոնց իւրաքանչիւրը քանի՞ տարուան էր:

13. Գեմետրիոս գնեց կարաս մը ձէթ քաշը $1\frac{1}{4}$ մէճիտիցէի, բայց զիպուածով ձէթին $\frac{1}{6}$ ը վաղեց. արդ՝ Գեմետրիոս ոչ շահ եւ ոչ վնաս ընելու համար ձիթոյն քաշը քանի՞ ծախելու է:

14. Ի՞նչ է այն թիւը որոյ մէկ անգամին վրայ եթէ յաւելուի թուոյն $\frac{2}{3}$ ը, դուժարը կ'ըլլայ քան զըուն կէս թուոյն 36 աւելի:

15. Մարիամու հայրը քանի մը դեղձ տուած է անոր, եւ Մարիամ կ'ուզէ զանոնք բաժնել իր ընկերներուն. եթէ իւրաքանչիւրին 5 հատ տայ, 7 դեղձ կ'աւելնայ, սակայն եթէ 9 դեղձ աւելի ունենար, իւրաքանչիւր ընկերի կրնար 6 հատ տալ. արդ՝ Մարիամու հայրը քանի՞ դեղձ տուած է անոր:

16. Գաւթի տարիքը Յովնանու տարիներուն $\frac{2}{3}$ ն է, եւ Գանիելի տարիներուն $\frac{3}{4}$ ին չափ. արդ՝ Ենթադրելով թէ, եթէ երեքին տարիներուն $\frac{1}{2}$ ը յաւելուի Գանիելի տարիներուն վրայ, դուժարը պիտի ըլլայ 39, կ'ուզենք գիտնալ թէ անոնց իւրաքանչիւրը քանի՞ տարեկան է:

17. Մարդ մը գնեց ժամացոյց մը, չղթաց մը եւ բանալի մը. չղթային համար վճարեց բանալւոյն գնոյն 3 ապատիկը, եւ ժամացոյցին համար վճարեց 5 մէճիտիցէ աւելի քան բանալւոյն եւ չղթային գնոյն $2\frac{3}{4}$ ը. արդ՝ Ենթադրելով թէ երեքին զինը 113 մէճիտիցէ աւելի է քան զ $\frac{1}{2}$ գնոյ չղթային, իւրաքանչիւրին զինը քանի՞ մէճիտիցէի կու գայ:

18. 2 նարնջի զինը քան զզին 3 լիմոնի մէկ դահեկան պակաս է. արդ՝ Ենթադրելով թէ 8 նարնջ եւ 6 լիմոն 32 դահեկանի են, 6 նարնջով 8 լիմոնը քանի՞ դահեկանի կու գայ:

19. Յունուարի 1 ին Մարկոսի ձեռքն անցաւ դուժար մը, եւ յունուարի 2 ին՝ ուրիշ դուժար մը

առաջին գումարին $\frac{3}{4}$ ինչ չափ: Մարկոս այս ստակին վճարեց իւր պարտքին $\frac{4}{5}$ ը, եւ մնաց 28 լիրա պարտք. արդ՝ Մարկոսի ձեռքը քանի՞ լիրա անցաւ յունուարի 1 ին, եւ քանի՞ լիրա յունուարի 2 ին:

20. Յակոբոս իւր ստակին $\frac{1}{3}$ ուլ դնեց վերարկու մը, $\frac{1}{12}$ ուլ բաճկոն մը, եւ $\frac{1}{6}$ ուլ տոմսակ մը, 18 մէճիտիցէ եւս կորսնցուց. յետոյ ի սկզբան իր քովը գտնուած ստակին $\frac{1}{8}$ ինչ չափ փոխ առաւ, եւ վերջապէս քովը մնաց 8 մէճիտիցէ. արդ՝ Մարկոս ի սկզբան քանի՞ մէճիտիցէ ունէր:

21. Մարդ մը ունի 18 քաշնոց կարաս մը գինի, եւ ուրիշ երկու պարսպ կարաս, մին՝ 7, եւ միւսը՝ 11 քաշնոց. արդ՝ այս երեք կարասէն զատ ուրիշ չափ չգործածելով 9 քաշ գինի ի՞նչպէս կրնայ չափել:



Handwritten text, possibly a signature or name, in cursive script on aged, yellowish paper.

of per

1841
London

London

London

U. 2.

№ 3719